

ՀՀ ՍՓԻՒՐՈՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅԾԾ ՑԱԿՈԲԵԱՆԻ ՌԴՋՈՅՑՆԻ ԽՕՍՔԸ

Միսիթարեան միաբանութեան քահանայապետական պատուի-
րակ, Գերապայծառ Տէր Լեւոն արքեպիսկոպոս Զէքիեան, Հոգեւոր
Հայրեր, յարգարժան գիտնականներ, ներկաներ:

Ենորհաւորում եմ բոլորիս Սուրբ Ղազար կղզում Միսիթա-
րեան միաբանութեան հաստատման 300ամեայ յորելեանի կապակ-
ցութեամբ, յորելեան, որի մեկնարկը տրուեց այս տարուայ Սեպ-
տեմբերին Միսիթարեան միաբանութեան Մայրավանքում եւ այ-
սօր Էլ շարունակում է Մայր Հայրենիքում: Ամէն անգամ, երբ
ոտք եմ դնում Սուրբ Ղազարի հողի վրայ, հոգիս պարուրուում է
մի անասելի հապատութեան զգացումով, եւ չի դադարում ինձ
տանջող այն միտքը, թէ ի՞նչպէս հարիւրամեակներ առաջ, առանց
գիտարուեստակական բաւարար հարաւորութիւնների, ջրերի այս
թագաւորութիւնում բորոտների կղզին վերածել են ծալկաստա-
նի, հոգեւոր եւ մշակութային կենտրոնի: Եւ առաւել տեսանելի է
դառնում, թէ ինչի է ընդունակ մարդը, այն Էլ հաւատով լեցուն
հայ մարդը, որ ցնորական թուացող երազը կարող է իրականու-
թիւն դարձնել:

Երեք դար առաջ հայ հոգեւոր մտքի հսկան՝ Միսիթար Սե-
բաստացին, օտար ափերում իր աստուածատուր տաղանդի ու հա-
ւատքի շնորհիւ իտալիայի Սուրբ Ղազար կղզում ստեղծեց մի
հաստատութիւն, որ տարիների ընթացքում վերածուեց հայ հո-
գեւոր, ուսումնակրթական, գրական, գիտամշակութային եւ գի-
տահետազօտական խոշորագոյն հաստատութեան, որտեղ գործում
են հայ եկեղեցին ու դիւանը, թանգարանն ու պատկերասրահը,
գրադարանն ու տպարանը:

Միսիթարեան միաբանութիւնն անցել է դժուարին, սակայն
ուսանելի, հետաքրքիր ու բազմաբեղուն ուղի: Պոլսում, դեռևս
1700 թուականին, Միսիթարեան միաբանութեան հիմնադրումից
յետոյ Միսիթար Սեբաստացի Աբբահայրը հարկադրուած էր ա-

պաստանել Վենետիկի Հանրապետութեան տիրապետութեան ներքոյ գտնուող Մեթոն բերդաքաղաքում (Յունաստան), ապա 1717ին հաստատուել Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, որտեղ էլ կրկին կեանքի կոչեց դեռեւս Սեւանայ կղզում Սուրբ Մարիամ Աստուածածնի նկարի առջեւ ծնուած իր տեսիլքը՝ Միաբանութիւն հիմնադրելու մասին, եւ կառուցեց իր մենաստանը՝ վանական համալիրով, որ դարձաւ համայն հայութեան հոգեւոր եւ մշակութային վերածննդի փարոս, ազգի լուսաւորութեան եւ զարթօնքի նշանաւոր կենտրոններից մէկը:

Այնար է Միիթար Սեբաստացու եւ Միիթարեանների առաքելութիւնը գերագնահատել հայ գիտամշակութային կեանքի զարգացման գործում: Շարունակելով Սեբաստացու գրական-հայագիտական ազգանուէր գործը՝ նրա յաջորդները ջերմեռանդ աշխատախրութեան, զնարեկրութիւնների եւ զրկանքների գնով աներկբայրէն զարգացրին ու խորացրին զրանք՝ Սուրբ Ղազարը վերածելով կրթութեան եւ մշակոյթի վերածննդի, համամարդկային եւ հոգեւոր քրիստոնէական արժէքների պահպանման եւ հայ յետագայ սերունդներին փոխանցելու իւրօրինակ հանգրուանի:

Միիթար Աբրահամյոն ու նրա հետեւորդները երբեք չնահանջեցին խոչընդունների եւ դժուարութիւնների առաջ եւ չչեղուցին իրենց առաքելութիւնն իրականացնելու ճշմարիտ ուղղուց: Նրանց ջանքերով իրագործուեցին եւրոպացի նշանաւոր գիտնականների աշխատութիւնների հայերէն թարգմանութիւններ, հնագոյն ձեռագրերի առաջին տպագրութիւններ, հայագիտական ուսումնասիրութիւններ, ստեղծուեցին գիտական ընդհանուր ու ճիւղային բառարաններ, կրօնական, պատմական, լեզուաբանական, բնագիտական, տնտեսագիտական եւ այլ բնոյթի աշխատութիւններ, որոնք հարստացրին ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային քաղաքակրթութեան գանձարանը: Այն դարձաւ հայագիտական իուզորագոյն կենտրոն, եւ դարերի ընթացքում անգնահատելի է նրա թողած յետագիծը հայագիտութեան ասպարէզում եւ հայապահպանութեան գործում:

Միիթարեաններն ուսումնասիրել եւ նպաստել են լեզուաբանութեան, գրականութեան, պատմութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան, կրօնագիտութեան զարգացմանը: Մեր հոգեւոր հայրերը դարեր շարունակ ստեղծել են ազգային այնպիսի մեծ արժէքներ, որոնք ոչ միայն չեն անհետացել, այլեւ դարձել են ազգային հապատութեան խորհրդանիշեր:

Միմիթարեան միաբանութիւնը նաեւ գիտական կենտրոն է, որտեղ հայագիտութիւնից բացի՝ ուսումնակրութմ են նաեւ գիտութեան տարբեր ոլորտներ: Հեղինակաւոր այս կենտրոնում անդամ օտարերկրացիներն են սովորել հայերէն, բնագրերից ուսումնասիրել մեր մատեանները եւ գրել մնացուն աշխատութիւններ:

Միմիթարեանների նպաստը ակնառու է նաեւ բառարանագրութեան ոլորտում: **Միմիթարեան կենտրոններում** կատարուած բառաստեղծման վիթխարի աշխատանքի վկաններն են այսօր գիտական ընդհանուր ու ճիւղային բառարանները, թարգմանական եւ ինքնուրոյն աշխատութիւնները:

Բազմաբեղուն է **Միմիթարեան հայրերի** գործունչութիւնը. անսահման մեծ է նրանց նուիրումը գիտութեան տարբեր ճիւղերի զարգացման գործին: Գնահատման եւ արժեւորման են արժանի բոլոր այն հրատարակութիւնները, որոնք փոխանցուել են մինչեւ մեր օրերը եւ անգնահատելի են իրենց բովանդակութեամբ եւ գիտական կշռով: **Միմիթարեան հայրերը** հայ մատենագիրների հրատարակութիւններով, թարգմանութիւններով եւ հայ մշակոյթին իրենց նուիրումով շարունակեցին **Մաշտոցեան աւանդները**: Ի՞ր արդիականութեամբ եւ գիտական արժեքով հայագիտութեան, հայ եւ համաշխարհային բառարանագրութեան մէջ աչքի է ընկնում **Միմիթար Սեբաստացու՝ ժամանակի ձեռագիր** եւ տպագիր բառադանձն ընդգրկող «Բառգիրք հայկագեան լեզու» երկշատոր կորթողային աշխատութիւնը, որ մինչ օրս շարունակում է մնալ բազմաթիւ ուսումնասիրողների ուշադրութեան կենտրոնում:

Այսօր էլ հայ գիտական մտքի գանձարանում իրենց մեծ արժեքն ունեն Հ. **Միքայէլ Չամչեանի** «Պատմութիւն հայոց» եռահասորեակը (18րդ դար), Հ. **Ստեփանոս Ազնոնցի** եւ Հ. **Չոլկաս ինճիճեանի** «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (11 հատոր, 19րդ դար), Հ. **Մկրտիչ Աւելիեանի** «Լիակատար վարք եւ վկայարածութիւն սրբոց» (12 հատոր, 19րդ դար), Հ. **Յարութիւն Աւգերեանի** «Բառարան անգլիերէն եւ հայերէն» (19րդ դար) ու «Բառարան հայերէն եւ անգլիական» (19րդ դար), Հ. **Գաբրիէլ Աւետիքեանի**, Հ. **Խաչատուր Միւրմեթսանի** եւ Հ. **Մկրտիչ Աւգերեանի** «Նոր բառգիրք հայկագեան լեզուի» երկհատորեակը (19րդ դար), Հ. **Գաբրիէլ Այմազովսկու** «Համառու պատմութիւն Ռուսաց» (19րդ դար) եւ «Պատմութիւն օսմանեան պետութեան» երկհատորեակը (19րդ դար), Հ. **Յովսէփ Գաթըրճեանի** «Տիեզերական պատ-

մութիւն» երկհատորեակը (19րդ դար), Հ. Ղեւոնդ Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն» (1853), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893) եւ այլ աշխատութիւններ, «Մատենագիրք նախնեաց», «Ընտիր մատենագիրք», «Սովորի հայկական» մատենաշարերը:

19րդ դարի վերջից գիտական, գրական, մշակութային կարեւոր գործունէութեամբ աչքի ընկան այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Հ. Գրիգորիս Գալեմքերեարեանը, Հ. Յակոբոս Տաշեանը, Հ. Արսէն Ղազիկեանը, Հ. Վարդան Հացունին, Հ. Սուքիս Էփրիկեանը, Հ. Ներսէս Ակինեանը, Հ. Համազասպ Ռսկեանը, Հ. Վահան Յովկաննիսեանը, Հ. Մեսրոպ Ճանաշեանը, Հ. Պօղոս Անանեանը եւ ուրիշներ:

Միսիթարեանների եւ առհասարակ հայ գիտական մտքի կեանքում շարունակում է իր ծանրակշիռ դերն ունենալ 1843 թուականից հրատարակուող «Բազմավիշ» հայագիտական, բանասիրական, գրական հանդէսը, որ հայկական ամենահին պարբերականն է, միեւնոյն ժամանակ ամենատարեց հանդէսն է իտալիայում հրատարակուող պարբերականների մէջ եւ չորրորդը՝ աշխարհի հնագոյն հանդէսների շարքում:

Հանդէսը նոր եւ խօսուն էջ է հայ գիտական կեանքում եւ մեծ ճանաչում ունի ընթերցանէր հասարակութեան լայն շրջանակներում: Նրա էջերում լոյս տեսած պատմական, բանասիրական, եկեղեցական, լեզուական, գրական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններն ու այլ բնոյթի նիւթերն իրենց բովանդակութեամբ եւ խորքային տարրողութեամբ հերթական վկայութիւնն են երեքտարեայ այս հաստատութեան հայապահպան գործունէութեան: 175մեայ այս գիտական ամսագիրն այսօր էլ շարունակում է իր բեղմնաւոր ուղին:

Միսիթարեանների լուսաւորչական, կրթական գործունէութիւնն իր հերթին արտայայտուել է տարբեր վայրերում բացուած գպրոցների միջոցով, որոնք երիտասարդ սերնդի շրջանում տարածեցին հայոց լեզուն, հայ մշակոյթը, հայ դպրութիւնը: Այսօր էլ Միսիթարեանների դպրոցները շարունակում են դաստիարակել հայրենասէր, հայկական ինքնութեանն ու արմատին նուիրուած, իր հայութեամբ, իր ազգային պատկաննելութեամբ հպարտ երիտասարդ սերունդ:

Միաբանութեան թանգարանային արժէքները եղակի են: Այստեղ գտնուող հոգեւոր-մշակութային արժէքները ոչ միայն հայ-

կական մշակոյթի անդամակատելի կոթողներ են, այլեւ համաշխարհային մշակոյթի արժեքները: Այսօր էլ իրենց ուսումնասիրողներին են սպասում Միաբանութեան վանական համայիրում պահուող առևլի քան 150.000 միաւոր գրքերն ու մոտ 5000 հայկական ձեռագիր մատեանները:

Սիրելի՝ ներկաներ,

Սուրբ Ղազարի հայոց կղզին բոլոր ժամանակներում երբեւէ չխամրող, հայ ազգային արժեքների վրայ հիմուած մշակութային լոյս ճառագող իւրօրինակ կենտրոն է մեզ եւ օտարների համար, որ համայն հայութեան համար դարձել է հոգեւոր-մշակութային վերածննդի փարոս եւ ուխտատեղի:

Մեր օրերում էլ Միխիթարեան միաբանութիւնն իր ստեղծած գիտական վիխիթարածաւալ մնայուն արժեքներով մեծապէս շարունակում է զարգացնել հայ բազմազարեան բեղմնաւոր միտքը: Պահպանելով եւ հարստացնելով միաբանութեան գիտահետազոտական եւ մշակութային հսկայական ժառանգութիւնը՝ Միխիթարեան հայրերը մուտք են գործում իրենց ծաղկուն մենաստանի եւ հայկական գիտամշակութային կենտրոնի փառահեղ պատմութեան չորրորդ հարիւրամեակը՝ նոր վերածննդի յոյով եւ ակնկալիքներով: Անշուշտ, նոր դարաշրջանն իր հետ բերում է նորանոր մարտահրաւելուներ ու խոչընառաներ, սակայն Միխիթարի հետեւորդները, հաւատարիմ իրենց ուխտին, վճռական են՝ դիմակայելու եւ յաղթահարելու իրենց առջեւ ծառացած բոլոր արգելքները: Աւելին՝ հայրենանուէր առաքելութեան համար նրանք նոր հերթափոխ են պատրաստում՝ կրթելով հայրենասէր եւ գրագէտ հոգեւոր սերունդ, որի արմատները Հայաստանում են:

Հայ ժողովրդի, հայոց պետութեան առաջնահերթութիւններից է գիտամշակութային այս կարեւորագոյն օջախի պահպանումն ու զարգացումը, որպէսզի այն շարունակի իր յաւերժական ընթացքը՝ ի նպաստ հայ մշակութային ժառանգութեան հզրացման եւ համաշխարհային քաղաքակրթութեան ներկապնակի հարստացման:

Սուրբ Ղազար կղզում Միխիթարեան միաբանութեան հաստատման 300ամեակի առիթով ՀՀ նախագահն իր ուղերձում նշում է՝ «պատմականութիւնն ամրագրում է ժամանակով: Միխիթարեան միաբանութիւնն իր դարաւոր գործունեաւութեամբ լաւագոյնս փաստել է դա՝ հաղորդակից դարձնելով ազգայինը համամրդկայի Ծին»:

Դարեր շարունակ նուիրուած լինելով հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային կեանքի լուսաւորման սրբազն գործին, Մխիթարեան հայրերն այսօր էլ շարունակում են նախնիներից պատգամ մնացած չնորհակալ գործը՝ ծաւալելով համաեւոպական եւ համահայկական գործունէութիւն, ապրելով եւ տքնելով աստուածային սիրով՝ ի շահ Հայրենիքի, ի շահ Հայութեան:

Փառք ու պատիւ Մխիթարեան բոլոր հոգեւոր հայրերին, ովքեր հարիւրամեակների ընթացքում կուտակուած հայկական պատմամշակութային հարուստ ժառանգութիւնը սերնդէսերունդ սրբօրէն պահեցին, պահպանեցին եւ փոխանցեցին մեզ եւ միեւնոյն ժամանակ դարձան իւրօրինակ կամուրջ Հայաստանի եւ Եւրոպայի, մասնաւորապէս՝ Հայաստանի եւ իտալիայի միջնեւ:

Փառաբանելով Մխիթար Սեբաստացու աստուածահաճոյ գործը մինչ այսօր սրբօրէն շարունակող նրա արժանաւոր յետնորդների՝ Մխիթարեան հոգեւոր հայրերի հայկական արժէքների պահպանութեան գործում անձնուրաց նուիրումը՝ մաղթում եմ – Մխիթարեանութեան անդամներին երկար եւ արգասարեր տարիներ՝ իրականացնելու Մխիթար Սեբաստացու հետեւեալ բանաձեւումը՝ «Օտարները Հայոց կողի կը կոչեմ. հոն ամէն ինչ հայկական է եւ հայ անունին համար: Աղօթքի հետ՝ աշխատանք, առաքինութեան հետ՝ հայրենասիրութիւն, հաւատքի հետ՝ գաղափարական սեւեռակէտ, եւ միշտ Հայաստան, ամէն ինչ Հայրենիքին համար, հայ ժողովուրդին համար...»:

Հպարտութեան անփոխարինելի զգացումով կրկին անգամ չնորհաւորում եմ բոլորիս Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարեան միաբանութեան հաստատման 300ամեակի առթիւ, իսկ գիտաժողովի աշխատանքներին մաղթում եմ արգասարեր, հետաքրքիր եւ արդիւնաւէտ ընթացք:

**ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՆՈՅԾ ԹԱԿՈԲԵԱՆ**